շնորհն. և որովհետև ազգասիրական գործոց հանդիսին մէջ առաջին տեղիքը ունի այն առատաձեռնութիւնը, որ ազգային մատաղահաս և լուսակարօտ մանկանց միջոց կ՚լինի դիմելու դէպի աստուածահաճոյ և կենցաղօգուտ գիտութեան և բարեկիրթ դաստիարակութեան մշտապայծառ տաճարը, որով և իւրեանց ուսման անձկաւէտ իղձը լցուցանելով, կ՚պատրաստուին նոքա հանդիսանալ պիտանացու անդամներ Ազգի և Եկեղեցւոյ ևս և ընդհանուր մարդկութեան, նաև փառք և պարծանք հայրենեաց. ուստի սեպուհ և նուիրական պարտաւորութիւն կայ այնպիսի արժանագով առատաձեռնութեան քաղցրաճաշակ և անմահ պտուղներն վայելողայ վերայ, որ իւրեանց լիառատ գոհունակութեան և երախտագիտութեան զգացմունքը հրապարակաւ նուիրեն այն հոյակապ անձանց, որոց բարեսէր սրտերուց բղխած են այդպիսի նախանձելի առաքինութիւններն, վասն որոյ և այս իսկ պատճառաւ տեղւոյս ծխական Հոգևոր դպրոցը ստանալով ազգասէր Պ. Մկրտիչ Սանասարեանցից նուիրած տարեկան երկու բաժին ամսագիրներէն տասն և հինգ* տետրակ անցեալ ամիսներուն համար, և աներկբայ լինելով, որ այսուհետև ևս պէտք է ստանայ ամսոյ ամիս ըստ կարգին, պարտք կ՚համարի "Արարատ" միջոցաւ" ՚ի լուր ազգային մատուցանել նոյն բարեհամբաւ ազգասիրին իւր երախտագիտական շնորհակալութեան խորին զգացմունքը։

Այո՛, դորա պանծալի անունը քաղցր և անմոռաց յիշատակաւ անմահ պէտք է մնայ սոյն դպրոցի աշակերտելոց սրտից մէջ, որ ՚ի կարգի ուրիշ հայկական ուսումնարանաց սորան ևս բարեհաճել է իւր ազգասիրական բարերարութիւնից բաժին հանել. սոցա մանկական աղօթից քաղցր մրմունջքը պիտի հանապազ սլանան դէպի երկինք Ամենաբարւոյ գերապայծառ օթևանը դէպ հայրենասէր բարերարի ազգօգուտ կենաց համար երկարամեայ կենդանութիւն և բարեբաղդութիւն մաղթելու։

Ո՜հ, հազար երանի էր տառապեալ մօրն մեր Հայաստանի, եթէ բազմապատկէր այդպիսի նախանձելի և հազուագիւտ ազգասիրաց թիւը նորա դարաւոր տրտմութիւնը փարատելուն համար որուն և Ճեամ մշտապէս փափաքող անձկաւէտ սրտի։

Ուսուցիչ վերոյիշեալ դպրոցին
Մկրտիչ Արարաչեանց.

---

* Մայիսէն մինչև դեկտ. երկերկու օրինակով թէպէտ 16 հատ պէտք էր լինէր, բայց որովհետև առաջին երեք ամիսն ը 1500ական օր. տպուած էր, որ յետոյ պակսելով կրկին հազարական օր. տպելու հակադրուեցանք. ինչպէս որ մայիս, յունիս և դեռ նոր յուլիսն ևս տպեցինք, որ շատ տեղեր չուղարկուած գոլով, այսուհետև կը ղրկենք, իսկ պ. Սանասարեանցին նուիրած դպրոցաց մի մի օրինակ խրկած ենք, վասն զի նոյն միջոցները հինգ վեց հատ առանձին պահած ունէինք։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ս. Էջմիածնի կալուածք՝ Վաղարշապատ, Նորարդ, Օշական, Մաստարայ և Մուղնի գիւղօրայքը և աւերակ գիւղատեղին Գետարգելայ՝ իւրեանց պատկանեալ սահմանօք հանդերձ, կապալով կը տրուին. Ուստի կը հրատարակեմք ՚ի գիտութիւն Ազգայնոց որ ՚ի Ռուսաստան, որպէս զի ցանկացողք օրինաւոր գրաւականօք փութան ներկայ գտնուիլ աճրդախօսութեանց, որ պիտի լինի յառաջակայ ապրիլ 7 նին և 9 նին ի Ս. Էջմիածին։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀՐԱՄԱՆԱՒ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ